

## ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ  
ԳՈՒՄԱՐՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (03.02.2014-12.06.2014) ԵՎ  
18.06.2014-ԻՆ ԵՎ 21.06.2014-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման չորրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 չորսօրյա և մեկական արտահերթ նիստ՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ, և մեկական արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 114 հարց, որից 78-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 31-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 5-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին, որոնցից 1-ը՝ ՀՀ Նախագահի առարկություններով վերադարձված «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքն էր:

Միջազգային պայմանագրերի վավերացման մասին հարցը՝ որպես ենթահարց ընդգրկում էր 23 միջազգային համաձայնագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 58 հարցով, այդ թվում՝ 28 ՀՀ կառավարության նախաձեռնություն, 18 ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 12 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 8 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 203 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 151-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի

փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանների ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 41-ը (36-ը ՀՀ կառավարության (8-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), իսկ 5-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին): Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 8 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Ընդունվել է ԱԺ-ի 4 որոշում, որից մեկը չորսօրյա նիստերի օրերը տեղափոխելու մասին: Մերժվել է 5 օրենսդրական նախաձեռնություն՝ 3 ԱԺ-ի որոշման նախագիծ, որոնք ներկայացվել էին պատգամավորների 1/3-ի ստորագրությամբ, 1 օրենքի նախագիծ, որը ԱԺ-ի պատգամավորները համարել էին արտահերթ և 1 կառավարության ներկայացրած և անհետաձգելի համարված օրենքների նախագծերի փաթեթ: Երկու օրենքի նախագիծ (ՀՀ կառավարության հեղինակած) ՀՀ Նախագահը վերադարձրել է առարկություններով և առաջարկություններով: Ամբողջությամբ ընդունված 41 օրենքներից կամ օրենքի փաթեթներից 6-ը մայր օրենքներ են, որոնք բոլորն էլ կառավարության նախաձեռնություններ էին:

#### Նստաշրջանի ընթացքում՝

- ԱԺ-ը ձևավորեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով, իսկ հետո ԱԺ որոշմամբ փոփոխություն կատարեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման կարգի մեջ:
- Փակ գաղտնի քվեարկությամբ Գալուստ Սահակյանը 101 կողմ, 3 դեմ ձայներով ընտրվեց ՀՀ ԱԺ նախագահ:
- Փակ գաղտնի քվեարկությամբ Հովհաննես Սահակյանը 80 կողմ, 5 դեմ ձայներով ընտրվեց ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:
- ՀՀԿ համամասնական ցուցակից ընտրվեցին երեք նոր պատգամավորներ՝ Լեոնիկ Ալեքսանյան, Գագիկ Մելիքյան, Վահրամ Մկրտչյան:
- Փակ գաղտնի քվեարկության արդյունքում Արթուր Զավադյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ:

- Փակ գաղտնի քվեարկությամբ Արայիկ Թունյանը 80 կողմ, 5 դեմ ձայներով նշանակվեց Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամ:
- Պատգամավոր Գրիգոր Գրիգորյանի լիազորությունները դադարեցվեցին՝ իր դիմումի համաձայն:
- ՕԵԿ խմբակցությունը հայտարարեց ընդդիմություն դառնալու մասին:
- ԱԺ-ի որոշմամբ՝ 74 կողմ, 3 եմ, 30 ձեռնպահ ձայներով, ստեղծվեց «Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով», որի գործունեության ժամկետն այնուհետև երկարաձգվեց ԱԺ-ի որոշմամբ:
- Քննարկվեց՝
  - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (գնաճի հաշվետվություն),
  - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիրը,
  - Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի գործունեության ծրագիրը,
  - Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2014 թվականի տարեկան գործունեության ծրագիրը,
  - Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի միջանկյալ եզրակացությունը:
- Քննարկվեց և ընդունվեց՝
  - Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը,
  - Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունը:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 8 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ ֆինանսական համագործակցության վերաբերյալ, գիտության, կրթության և

առողջապահության բնագավառներում միջպետական համագործակցության վերաբերյալ, ինչպես նաև տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված վարկային և այլ համաձայնագրեր:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 12 գրավոր հարցով, որոնցից հնչել է 6-ը, և 79 բանավոր հարցով: «Օրինաց երկիր» խմբակցությունը մեկ հարցապնդմամբ դիմել է ՀՀ կառավարությանը, որը սակայն չի քննարկվել, քանի որ խմբակցությունը նման ցանկություն չի հայտնել:

Հնչել է 136 պատգամավորական հայտարարություն, որոնցից 48-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը: